



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 436 - Ա

04 նոյեմբերի 2019 թ.

**«ԴՊՐԱԲԱԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՅԳԵՆ ԻՆԱՆՑԻՆ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՇՈՒՐԱ ԽԱԶՍՈՒՐՅԱՆԻՆ  
ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝


1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Դպրաբակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Այգեն Ինանցին 2019 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում մասնագիտական վերապատրաստման դասընթացին:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Դպրաբակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները 2019 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Դպրաբակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Շուրա Խաչատուրյանի վրա:

3. Այգեն Ինանցին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի նոյեմբերի 18-ից:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին:

04.11.2019

  
**ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ**  
 Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ

**ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ**  
 Բ.Գավառ

✓